

կաներ, որոնք ստուգեցին հին ետրու-
րիոյ ասիական քաղաքականութեան
հետ ունեցած վերաբերութիւնը:

Բայց աւելի հետաքրքրական են վեր-
ջի ժամանակներս Ուուսրովի իշխանին
ամարանոցն եղած պեղմանց առթիւ 'ի
լոյս եղած բաներն, որոնց մէջ ընտա-
նեաց գերեզման մին ալ կայ, զոր և կը
ներկայացընէ առաջիկայ պատկերս, որ
գրեթէ ուժմեղը լայն քառակուսի մի-
ջոց մը կը զրաւէ: Մուտքը չորս պատե-
րուն մէկուն վրայ է, և միւս երեք պա-
տերուն վրայ յարմարցուած են մըր-
ճով քարի վրայ բանած գերեզմաննե-
րը, որոնց մէջ կը հանդին մեռեալը,
և այս գերեզմանաց ամեն մէկուն վրայ
կան կարմրագոյն և ոսկեգոյն քարերէ
բարձիկներ:

Գերեզմանէ գերեզման եղած միջո-
ցին մէջ շատ մը անպաճոյն փոսեր կան,
ուր կ'երեայ թէ ստորնագոյն աստիճա-
նի անձինք կը թաղուէին:

Մուտքին անմիջապէս հանդիպակայ
պատը, որ մեր պատկերին ներկայա-
ցուցածն է, կը փակէ իր մէջ ընտա-
նեաց զլխաւորին կամ թէ նոյն տեղը
թաղելոց մէջ աւելի երեւլի անձին գե-
րեզմանը:

Նոյն գերեզմանին ստորնագոյն կողմը
բարձրաքանդակ գեղեցկագործ երկու
պատկերներ կը տեսնուին, որոնք ըստ
մեծի մասին անարատ պահուած են:
Ասոնցմէ մէկը մարդու կերպարանք ու-
նի, և հաւանական է որ տեսակ մը աս-
տուածութիւն կը ներկայացընէ, օձաձև
ոլորեալ ոտքերով և երկայն մօրուքով.
մէկ ձեռքք օձ մ'ունի, և միւս ձեռքը տե-
սակ մը ճիւղ: Այսպիսի պատկերներ
գտնուեցան նաև ետրուրական ուրիշ
քաղաք մը որ Տարկուինիա կ'ըսուի: Միւս
պատկերն երեքզիսեան կերպեր մ'է, և
պարանոցը օձերէ ձեւացած անուր մ'ու-
նի: Կամարը վեր բռնող սեանց խարըս-
խացը վրայ կենդանեաց ուրիշ պատ-
կերներ ալ կը գտնուին. ինչպէս կա-
տու և սագ այլ և այլ դրից մէջ:

Բայց այս գերեզմանատան յարգն ա-
ւելցընող բաներն են սեանց և պատե-

րուն զարդուցը վրայ եղած քանի մը
քանդակներն, որոնք կը ներկայացընեն
վնասողական և պաշտպանողական զէն-
քեր. ամենօրեայ գործածութեան հա-
մար սպասներ, ձկնորսութեան և որսոր-
դութեն գործիներ, և այլն, և կենդանա-
զիրներ, որոնք շատ բնական գուներով
նկարուած են:

ՀԻՆԴ ՇԱԲԱԹ ՕԴԱՊԱՐԿԻ ՄԵԶ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԳՂԻԱՑԻՈՑ

ՅԱ. ՔՐԻՍՏ.

(Տես Երես 81:)

— Ըրէ ուղածդ, պատասխանեց տոք-
դորը ծիծաղելով. դու ալ մասնաւոր
կերպ մ'ունիս աշխարհազրութիւնը քմ-
բոնելու, որ շատ արհամարհելու չէ:

Եւ այնպէս վիկորիային այն գծին
անցքը բաժակով տօնեցին:

Վիկորիան երագաբար կը քալէր:
Արևմտեան դին ցած և զրեթէ միա-
կերպ լճափը կը տեսնէին. իսկ ներսե-
րը՝ Ուկանտա և Ուղոկա լերանց ամե-
նէն բարձր տափարակները: Հովուն ե-
րագութիւնը հետզհետէ կը սաստկա-
նար, անանկ որ զրեթէ առ ժամ երե-
սուն մղոն կը քալէին:

Նիանզային ջրերը սաստկութեամբ
ալէկոծուելով, ծովու ալեաց նման կը
փրփրային: Ալեաց ճօճմունքէն տղբո-
րը հասկցաւ որ լիճը շատ խոր պիտոր
ըլլար. հազիւ թէ իրենց արագ անցքին
ժամանակը՝ մէկ քանի կոշտ մակոյկ-
ներ ջրին երեսը տեսնելու կարող եղան:

— Այդ լիճը, ըսաւ տղբորը, ան-
շուշտ իր բարձր զրից պատճառաւ Ավ-
րիկէի արևելեան կողմի գետոց բնական
աւազանն է. երկինքն ինչ որ իրմէն ե-
լած գետերէն գոլորշիով կ'առնու՝ ան-
ձրեսով նորէն իրեն կը դարձընէ: ինձի
ապահով կ'երևնայ որ նեղոսը ասկէ
պէտք է բղիսէ:

— Կը տեսնենք անշուշտ, պատասխանեց Քէննըտի:

Ժամը իննին ատենները արևմտեան ափը մօտեցաւ, որ անբնակ և անտառուտ կ'երևար. քամին քիչ մը դէպ 'ի արևելք շնչեց, որով կարող եղան լճին միւս եղերքը տեսնալ:

Այս եղերքը անանկ խոսոր դիմ մը կը ձեացընէր որ մեծ բութ անկեամք մը կը վերջանար դէպ 'ի 2⁰, 40' հիւսիսային լայնութեն, Նիանզային այս ծայրին վրայ բարձր լերանց ցամաք և անքեր կատարները ցից կ'ամբառնային. սակայն անոնց բազմապտոյտ կիրճի մը մէջէն եռացող գետի մը կարկաջահոս ջրերը կը վազէին:

Տոքդոր Ֆէրկըսըն մինչդեռ մէկ կողմանէ իր գունտն ուղղելու ուշ կը դնէր, միւս կողմանէ անյագ աչքով մը այն երկերը կը դնէր:

— Նայեցէք, կանչեց, նայեցէք բարեկամք. Արարացւոց ըսածներն ստոյդէին: Գետ մը կար կ'ըսէին որուն միջոցաւ Ռուքէուէուէ լիճն իր ջրերն դէպ 'ի հիւսիս կը թափէր, և այդ գետը իրապէս կայ, ուր և մենք երթալով կ'իջնանք. որուն վազաձքն իսկ անանկ երագ է, որ մեր երագ քայլին կը հաւասարի:

Եւ այդ ջրի կաթիլն որ մեր ոտիցներ քեր կը խուսափէ, անտարակոյս Միջերկըսականին ջրոց հետ խառնուելու կը դիմէ: Նեղոս է այդ:

— Նեղոսն է, ըսաւ Քէննըտի, որ Սամուէլ Ֆէրկըսընի եռանդեամք կ'ոգեսրէր:

— Կեցցէ Նեղոս, կանչեց ձոյ, որ զուարթ եղած ժամանակը միշտ պատրաստական՝ ինչեցէ բանի կեցցէ կը կանչէր:

Տեղ տեղ ահագին ժայռեր այդ խորհըրդաւոր գետին ընթացից խափան կ'ըլլային: Զուրը կը փրփրար. տեղ տեղ երագ հոսանքներ ընելով, տեղ տեղ սահանակերպ գահավիժելով, տոքդորին մտածութիւնը կը հաստատէր: Այն շրջապատ լեռներուն վրայէն բազմաթիւ հեղեղք փրփրահոս անկմամք մէ-

ջը կը հոսէին, զորոնք աչքը հարիւրաւոր կը տեսնէր: Գետնէն ցիր ցիր ջրոց նուրբ երակներ կը բղխէին, որ մէկզմէկ կտրելով, մէկմէկու հետ խառնուելով, երագութեամբ մէկզմէկէ գերազանցելով, բոլոր այն նորածին գետակին մէջ կ'երթային կը թափուէին, որ զանոնք իր մէջը ընդունելէն ետև մեծ գետ կը փոխուէր կ'ըլլար:

— Ահա բուն նեղոսը, ըսաւ համոզմամք տոքդորը: Իր անուան ծագումն իր ջրոց ծագմանը հաւասար մեծ տագնապ եղած է դիսնոց, յունէն, զփտիէն, սանպրիտիէն ծագած ըլլայ ըսեր են. սակայն այդ փոյթ չէ, որովհետև վերջապէս իր աղբերականց ծագման գաղտնիքը յայտներ է:

— Սակայն, ըսաւ որսորդը, Բնչպէս կարելի է ապահով ըլլալ որ այդ գետը մի և նոյն է անոր հետ զոր Հիւսիսի ճանապարհորդք տեսեր են:

— Ատոր ստոյդ, անժխտելի, և անսխալ ապացոյցները կ'ունենանք, պատասխանեց Ֆէրկըսըն, թէ որ հովը դեռևս ժամ մըն ալ մեզի յաջող շնչէ:

Լերինք մէկմէկէ բաժնուելով կը հեռանային, բազմաթիւ գիւղատեղաց և շուշմայով, տուրայով, և շաքարեղեգով մշակած դաշտերու տեղիք տալով: Այս երկիրներուն ժողովուրդը յուղեալ ութնամական երեսյթ կը բերէին. աւելի կիրք ելլելու պատրաստական կ'երեային քան թէ յարդութեն երկրպագութիւն ընելու. վասն զի օդապարկին մէջ ոչ թէ զիք՝ այլ օտարականք կը գուշակէին: Կարծես թէ դէպ 'ի նեղոսի ակունքը ելլելով, իրենցմէ բան մը գողնալ կ'ուզէին: Որով հարկ եղաւ զվիկտորիան հրացանից հարուածէն հեռու բռնել:

— Հոս տեղս ցամաքը կոխել դժուարին պիտոր ըլլայ, ըսաւ Սկովտիացին:

— Շատ աղէկ, պատասխանեց ձոյ, վասան այս բնկացն է. մեր խօսակցութեանց վայելքէն զիրենք պիտոր զըրկենք:

— Սակայն հարկ է որ իջնամ, պա-

տասխանեց ֆէրկըսըն, թէպէտ և քառորդուան մը համար ալ ըլլայ: Առանց ատոր անկարելի է որ հետազօտիչ արշաւանաց հետեանքը ստուգեմ:

— Այդ բանն ուրեմն անհրաժեշտ կարենր է, Սամուէլ:

— Անհրաժեշտ: և հարկ է իշնանք թէ և հրացանն ալ գործածելու պէտք ըլլայ:

— Այդ գործը ինծի անտախորժ չէ, պատասխանեց Քէննըտի իր սիրուն քարապինան ձեռնածելով:

— Ուղածիդ պէս պատրաստ, տէրս, ըստ ձոյ ինքզինքը կուուին պատրաստելով:

— Այս առաջին անգամ չէ որ զէնքը ձեռք ուսմանական քննութիւններ կը լուսին: Նոյնպիսի բան մըն ալ ուսմանական դաղղիացւոյ մը հանդիպեր է Սպանիոյ լերանց մէջ, երբ երկրիս միջօրէականը կը չափէր:

— Հանդարտ եղիր, Սամուէլ, և վըտահ լեր քու անձնապահներուդ վրայ:

— Հս իշնալու ենք, պարոն:

— Ոչ. այլ գեռ ևս վեր բարձրանաւու ենք որ երկրիս մակերևութիւն ճիշտ կազմութիւնը դիտենք: Անմիջապէս ջըրածինը ընդարձակեցաւ, և շուտ մը վիկտորիան երկրէս երկու հազար հինգ հարիւր սոտք բարձրութեամբ օդուն մէջ կը սաւառնէր:

Այն բարձրութենէն գետակներու անլուծանելի ցանց մը կը տեսնուէր՝ որ ամենը այն մեծ գետին մէջ կը հոսէին. և գեռ ևս արևմտեան կողմի բազմաթիւ ըլլոց մէջէն արգաւանդ գաշտերը կրտրելով ուրիշ աւելի բազմաթիւ գետակներ գէպ ՚ի հոն կը հոսէին:

— Կոնտոքորոյէն իննսուն մղսն հեռու չենք, ըստ առօքորը, աշխարհացուցին վրայ մատնանիշ ընելով, և Հիւսիսի հետազօտիչներուն հասած կէտէն հինգ մղսն աստին կը գտնուինք: Զգուշութեամբ գետնին մօտենանք:

Վիկտորիան երկու հազար սոտքէ աւելի գէպ ՚ի վար խոնարհեցաւ:

— Հիմա բարեկամք ամեն գէպի պատրաստ եղիք:

— Պատրաստ ենք, պատասխանեցին Տիք և ձոյ:

— Աղէք:

Վիկտորիան հազիւ հարիւր սոտք բարձրութեամբ գետին վրայէն կը քալէր: Այս տեղս Նեղոսի լայնութիւնը յիսուն կանգուն կը չափէր, և անոր ափունքը գտնուող գեղերուն բնիկները խոսվախոյզ կ'աղմըկէին: Երկրորդ աստիճանին տակ գետը մօտ աասը սոտք բարձրութեամբ ուղահայեաց սահանք մը կը ձեացընէ, որ անանցանելի է:

— Ահա այն սահանքն որ պարոն ցէպօնո նշանակեր է, կանչեց տորդորը:

Գետին աւաղանը հետզհետէ կ'ընդլայնար, բազմաթիւ ցիրուցան կղզիներով զարդարուած, զորոնք Սամուէլ ֆէրկըսըն անյազ աչքով կը դիտէր. կարծես թէ նշանակեալ կէտ մը կը վինտուէր, զոր գեռ ևս տեսնալչէր կը նար:

Մէկ քանի սևամորթք օգապարկին տակէն նաւակով մը յառաջ ըլլալով, Քէննըտի հրացանի հարուածով մը զանոնք ողջունեց, որ առանց մէկու մը վեաս հասցընելու բունադատեց զանոնք որ կրցածնուն չափ շուտ գետափը ելլեն:

— Բարի ճանապարհ, մաղթեց անոնց ձոյ, եթէ անոնց տեղն ըլլայի, նորէն ետ դառնալու փորձ չէի ըներ. արտաքոյ կարգի վախ ունենալու էի անանկ հրէշէ մը՝ որ ուղածին պէս կայծակ կը թափէ:

Սակայն յանկարծ տոքդոր ֆէրկըսըն իր դիտակն առնելով գէպ ՚ի գետին մէջտեղը գտնուող կղզիի մը վրայ ուղղեց:

— Զմրս ծառեր, կանչեց. Հս վարնայեցէք:

Եւ յիրաւի չորս կղզիացեալ ծառեր կղղւոյն ծայրը բարձրագագաթ կ'ամբ բառնային:

— Այդ Պէնկա կղզին է. ստոյդ նոյն այդ կղզին է, ըստ:

— Աղեկ . ուրիշ , հարցուց Քէննըտի :
— Հոն տեղն է որ վար իջնալու ենք ,
եթէ Աստօտած կ'ուզէ :

— Սակայն կարծես թէ մէջը բնա-
կութիւն կայ , պարսն Սամուէլ :

— Ճոյ իրաւունք ունի . եթէ չեմ խա-
բուիր , ահա քանի չափ բնկաց խումբ
մը կը տեսնամ :

— Հիմա կը փախցընենք զանոնք ,
դժուարին բան մը չէ , պատասխանեց
Ֆէրկըսըն :

— Ըլլայ ըսածիդ պէս , ըսաւ որ-
սորդը :

Արել զէնիթն էր . Վիկտորիան կը դ-
զւոյն մօտեցաւ :

Սևամորթք , որ Մաքաօ ցեղին կը վե-
րաբերէին , կատաղի աղաղակներ փըր-
ցուցին : Անոնցմէ մէկը իր կեղեւէ գըլ-
խարկն օդու մէջ կը ճօճէր . Քէննըտի
իրր նպատակ անոր նշան առնելով հա-
րուածն արձրկեց , և իսկոյն գլխարկը
կտոր կտոր եղաւ :

Առ հասարակ ամենը ցիրուցան փա-
խուստ գարձան : Բնիկներն գետը նե-
տուելով լողալով անդին անցան , ապա
երկու ափունքներէն գնդակաց կար-
կուտ մը և նետերու անձրեւ մը արձր-
կուեցաւ . սակայն առանց ամենեին վը-
նաս մը հասցընելու օդապարկին , որուն
խարիսխը ժայռին ճեղքի մը մէջ բըռ-
նուեր արդիլուեր էր : Ճոյ չուանին վրա-
յէն գետինը սահեցաւ :

— Սանդուղը , կանչեց տոքդորը . հա-
պա Քէննըտի ետեւէս եկուր :

— Ի՞նչ կ'ուզես ընել :
— Վար իջնանք . վկայի մը պէտք
ունիմ :

— Ահա պատրաստ եմ :
— Ճոյ , աղէկ պահպանութիւն ըրէ :
— Վստահ եղիր , պարոն , ամեն բա-
նի պատասխանատու ես կը լլամ :

— Եկուր , Տիք , ըսաւ տոքդորը , ոտքը
գետինը կոխելով :

Իր ընկերն դէպ 'ի կղզւոյն ճայրը ցը-
ցուած ժայռերու խումբի մը տարաւ , և
հոն քիչ մը ատեն թուփերուն մէջէն

բան մը վինտուեց , որով և ձեռքերն ալ
արիւնթաթախ ըրաւ :

Մէկ մըն ալ յանկարծ ուժով մը որ
սորդին թևէն բռնեց :

— Նայէ , ըսաւ :

— Գրե՛ր :

Եւ յիրավի ժայռին վրայ փորած գը-
րեր մաքուր և յատակ աչքին կը ներ-
կայանային : Որոշ կերպով կը կարդա-
ցուէր .

A. D.

— A. D. ըսաւ տոքդոր Ֆէրկըսըն .
Պնտուէա Ցէպօնօ : Նոյն իսկ այն ճանա-
պարհորդին ստորագրութիւնը որ նե-
ղոս գետին ամենէն հեռաւոր ծայրը
կրցեր է համնիլ :

— Ահա այդ անժխտելի է , բարեկամ
Սամուէլ :

— Համոզուած ես հիմա :

— Նեղոս գետն է , ալ տարակուսիլ
չենք կրնար :

Տոքդորը յետին անգամ մըն ալ այն
թանկագին սկզբնատառերուն նայե-
ցաւ , որոնց ձևն ու մեծութիւնը ճշդիւ
նշանակեց :

— Իսկ հիմա , ըսաւ , հապա , գունաը
դառնանք :

— Շուտ ուրեմն , որովհետեւ ահա մէկ
քանի բնիկներ գետը անցնելու կը պա-
տրաստուին :

— Փոյթ չունինք հիմա : Թող զմեզ
քամին քանի մը ժամ դէպ 'ի հիւսիս
մղէ , ու շուտ մը կոնտոքորո կը հաս-
նինք , ուսկից շատ չուշանանք պիտոր
մեր հայրենակցաց ձեռքը սեղմելու :

Տասը վայրկեան ետքը Վիկտորիան
վսեմաբար վեր կը բարձրանար , մինչ-
դեռ տոքդոր Ֆէրկըսըն իրրե յաջողու-
թեան նշան , Անդզիոյ նշանադրոշմ՝ դը-
րօշը կը պարզէր :

Կը շարուեակուի :

=====